



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

“04” 06 2020թ.

N..... 684-Ա

Հ Ր Ա Մ Ա Ն

ԱՇՈՏ ԼԱՎՐԵՆՏԻ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ «ՀԱՅԱՎՏՈԿԱՅԱՐԱՆ» ՓԲԸ-Ի ԳԼԽԱՎՈՐ
ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի թ) կետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 5-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 224-Ն որոշումը, ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշման 19-րդ կետի 20-րդ ենթակետը և «Հայավտոկայարան» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի՝ (բաժնետիրոջ) որոշման 2020 թվականի հունիսի 3-ի արձանագրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Աշոտ Լավրենտի Առուշանյանին 2020 թվականի հունիսի 3-ից նշանակել «Հայավտոկայարան» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև վերոնշյալ թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անձի կողմից զբաղեցնելը և նրա հետ սահմանված կարգով կնքել աշխատանքային պայմանագիր:

2. Ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Աշոտ Առուշանյանին՝ սահմանված կարգով ապահովել Ընկերությանը ամրակցված ակտիվների և պարտավորությունների գույքագրման աշխատանքների կատարումը:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել Ըկերության գլխավոր տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթի կազմակերպման աշխատանքները:

Հիմք՝ Աշոտ Առուշանյանի դիմումը:

04.06.2020

X 

ՍՈՒՐԵՆ ՊԱՊԻԿՅԱՆ

Signed by: PAPIKYAN SUREN 3604860490

Ս. Պապիկյան